

ՀՈՒՇԱԳԻՐ

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՅԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵՎ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ք.Երևան

« 16 » 01 20¹³թ.

Սույն Հուշագրով Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության (այսուհետ՝ Առողջապահության նախարարություն), ելնելով դեղերի ոլորտում ձեռնարկատիրության զարգացման և սպառողների շահերի պաշտպանության, բարեխիղճ և ազատ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովման խնդիրներից՝ համաձայնում են ներքոշարադրյալի վերաբերյալ.

1. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում դեղերի գների վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտներից ստացած և դիտանցումների արդյունքում հավաքագրված տեղեկատվությունն ըստ անհրաժեշտության ուղարկում է Առողջապահության նախարարություն:

2. Հանձնաժողովը դեղերի շրջանառության ոլորտում իրականացված ուսումնասիրությունների և վարչական վարույթների, այդ թվում՝ գների անհիմն բարձրացումների, ոչ բարեխիղճ մրցակցության համար կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ կայացված որոշումներն ուղարկում է Առողջապահության նախարարության:


3. Առողջապահության նախարարությունն ամսական կտրվածքով Հանձնաժողովին է տրամադրում դեղերի գների վերաբերյալ հավաքագրված տեղեկատվությունը՝ գների անհիմն բարձրացումների, իջեցումների և պահպանումների դեպքում համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու նպատակով:

4. Դեղերի շրջանառության ոլորտում համապատասխան ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով Հանձնաժողովում կամ Առողջապահության նախարարությունում կարող են կազմակերպվել մասնագիտական քննարկումներ, փորձի փոխանակում և փոխօգնությանն ուղղված այլ միջոցառումներ:

5. Հանձնաժողովի կողմից հայտնաբերված հնարավոր խախտումների վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը Առողջապահության նախարարություն ուղարկելու, ինչպես նաև Հանձնաժողովի ու Առողջապահության նախարարության միջև տեղեկատվության փոխանակման հետ կապված և սույն հուշագրից բխող այլ աշխատանքների համակարգումն իրականացվում է Հանձնաժողովի և Առողջապահության նախարարության ներկայացուցիչների միջոցով:

Սույն հուշագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակից, յուրաքանչյուր կողմից մեկական օրինակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐՏԱԿ ՇԱԲՈՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ԴԵՐԵՆԻԿ ԴՈՒՄԱՆՅԱՆ

